ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/3-1

ք. Երևան 25.07.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Յուտեկ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել **30 օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 36175200 (երեսունվեց միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Կապի և ԱԿՀ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Յուտեկ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Տ. Պետրոսյան 51,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ԲԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1150002044004017
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00171822
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Լ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-1/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
Հ/Հ	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
								հասցեն	ժամկետը*** 2018թ 3-րդ եռամսյակ
1	կապարային մարտկոցներ (Մարտկոց 12Վ 7Ա) ES12-7	EAGLE China	Լիցքավորվող մարտկոց, անխափան սնուցման սարքի համար, հերմետիկ արճիճաթթվային, նոմինալ լարումը 12Վ, ունակությունը 7 Աժամ, լիցքավորման հոսանքի ուժը 1.2Ա: Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	4860	729000	150	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	150
9	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (սնուցման բլոկ) PS-19 AC Coral	Tadiran Coral Israel	Սնուցման բլոկ PS-19 AC Coral, POWER SUPPLY սնուցումը միաֆազ փոփոխական հոսանքից լարումը 220վ, հաճախականությունը 50 Հg (85~264 Վ/47~65 Հg): Արտադրության տարեթիվ 2011թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	699000	1398000	2	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	2
11	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (տպասալ 8SMS) 8SMS	Tadiran Coral Israel	Տպասալ 8SMS, աբոնենտային գծերի, ստանդարտ տեղական սնուցման հեռախոսների համար 8SMS ipx Coral թվային կոմուտատորի համար նախատեսված: Արտադրության տարեթիվ 2011թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	699000	1398000	2	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	2
25	հեռախոսային սարքեր (ԱՀԿ հեռախոս) NP 2035	Nippon Bulgaria, China	Հեռախոսային ապարատ,ստեղնային, Tone/Pulse ռեժիմներ, զանգի ձայնի և բարձրախոսի կարգավորման հնարավորություն, պատին ամրացնելու հնարավորություն, աշխատանքային պայմանների թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը՝-10C+45C, քաշը՝ ոչ պակաս քան 580 գ: Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	6300	3150000	500	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	500
27	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ 200 աբոնենտ IP) KX-TDE200	Panasonic Japan	Panasonic KX-TDE200, մինչև 128 արտաքին և 256 ներքին գծեր, 128 մոբիլ աբոնենտ, միկրոբջջային գիծ DECT ստանդարտի, VoIP (H.323 v.2), E1 (QSIG, ISDN PRI EDSS-1, R2 DTMF/MFC/Pulse), ISDN BRI, E&M միացնող գծեր, 3 անկախ /2 թվային և 1 անալոգային/ հեռախոսային ապարատների միացման հնարավորություն, ցանկացած անալոգային հեռախոսային ապարատի, ֆաքսերի և մոդեմների հետ համատեղելիություն, համակարգիչից ծրագրավորման հնարավորություն ցանցով, մոդեմով կամ Ինտերնետով: Համալրվածությունը՝ բազային կանգնակ	լրակազմ	1800000	1800000	1	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	1

			Panasonic KX-TDE200ՌՈՒ, սնուցման բլոկ KX-TDA0103XJ, քարտեր՝ KX-TDA0180X – 1 հատ, KX-TDA0170XJ – 1 հատ, KX-TDA0290XJ – 2 հատ, KX-TDA0174XJ – 6 հատ, ամֆինոլ մալուխ 8 հատ: Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:						
28	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ 24 աբոնենտ) PBX-24	Panasonic Japan	Panasonic PBX-24, 24 ներքին թվային և անալոգային գծեր, 8 անալոգային արտաքին գծեր, համակարգչով լոկալ ցանցով ծրագրավորման հնարավորություն, DISA ֆունկցիայի հնարավորություն (սիստեմային ռեսուրսների անմիջական հասանելիության հնարավորություն): Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	264600	1323000	5	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	5
32	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք) MN-100 KB	Icom Japan	Դիպոլային ալեհավաք MN-100 KB 1.5-30 ՄՀց հաճախականության տիրույթի, հզորությունը ոչ պակաս 100 Վտ (SSB 200 Վտ), հավաքածուի մեջ՝ համաձայնեցնող սարք (բարձր հաճախականության մալուխը ռադիոկայանին միացնելու համար ելք UHF female), 30մ, բարձր հաճախականության ՌԿ-50 տիպի մալուխ, դիպոլային լարեր 2x8մ բացվացքով: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	94800	1422000	15	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	15
33	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք ավտոմոբիլային) AH-2B	Icom Japan	ավտոմոբիլային AH-2B Հաճախության տիրույթը՝ 3.5 ՄՀց-50 ՄՀց Կանգուն ալիքի գործակիցը ոչ ավելի 1.5 Հզորությունը ոչ պակաս ՝ 120 Վտ Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -40C+60C: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	171600	2574000	15	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	15
37	ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչով) VX-1700 BLA-1000	Verex RM Italy Japan Italy	ԿԱ տիրույթի ռադիոկայան 1Կվտ հզորության ուժեղացուցիչով: Հաճախականության տիրույթը՝ ընդունում-0,03-30 Մhց, հաղորդում-1.6 -30 Մhց, աշխատանքային ռեժիմը՝ SSB, CW, RTTY (FSK), AM, ռադիոկայանի հզորությունը՝ 125 Վտ: Սնուցման աղբյուր՝ մուտքային լարումը փոփոխական հոսանքից 220+- 10% ,հաստատուն հոսանքի ելքային լարումը 13,8Վ, հոսանքի ուժը 25Ա: Հզորության ուժեղացուցիչ 1Կվտ BLA1000, - աշխատանքային հաճախականության տիրույթը՝1.5 -30 Մhց և 48-55 Մhց, - ճառագայթման տեսակները AM, FM, SSB, CW, RTTY: - մուտքային հզորությունը 100Վտ (110 Վտ առավելագույնը), միջին ելքային հզորությունը 1ԿՎտ, - սնուցումը փոփոխական հոսանքի աղբյուրից 200-250Վ, հոսանքի ուժը 15,5Ա, երկրորդային	լրակազմ	3399600	3399600	1	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	1

			լարումը 48Վ, հոսանքի ծախսը 45Աժամ առավելագույնը, - բարձր հաճախականության մուտքային դիմադրությունը 50 օհմ, բարձր հաճախականության ելքի դիմադրությունը 50օհմ: Պաշտպանիչ համակարգ՝ պաշտպանություն բարձր մուտքային հզորությունից, բարձր լարումից, ֆիլտրի սխալ միացումից, գերտաքացումից, կարճ միացումից: Ռադիոկայանի և հզորության ուժեղացուցիչի համակցման կոմուտացիոն մալուխ ACC միացման խրոցով (mini DIN) տեսակի: Հոսանքի ծախսը հաղորդման ռեժիմում 2,2ԿՎ*ժամ : Լրակազմը՝ սնուցման մալուխ, բարձր հաճախականության մուտքի մալուխ 1մ, դիմադրությունը 50 օհմ, լայնատիրույթ դիպոլային ալեհավաք 1ԿՎտ հզորության: Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -10C+60C: Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:						
38	ռացիաներ (Ռադիոկայան) DR138	Alinco Japan	136-174ՄՀց հաճախականության ալեհավաքով, ծրագրավորման փաթեթով ռադիոկայան, Զինվորական ստանդարտ MIL-STD810G C/D/E, Հաճախականության տիրույթը՝ 136-174ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 45Վտ կապուղիների քանակը՝ 128, 8 գոտի, Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -20C+60C: Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	105000	2100000	20	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	20
39	ռացիաներ (Ռադիոկայան) DR438	Alinco Japan	400-512ՄՀց հաճախականության ալեհավաքով, ծրագրավորման փաթեթով ռադիոկայան, Զինվորական ստանդարտ MIL-STD810G C/D/E, Հաճախականության տիրույթը՝ 400-470ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 45Վտ, կապուղիների քանակը՝ 128, 8 գոտի, Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -20C+60C: Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	105000	2100000	20	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	20
41	ռացիաներ (Ռադիոկայան) A10	Alinco Japan	Հաճախության տիրույթը՝ ընդունում- հաղորդում- 136-174 ՄՀց, ստեղնաշարով,հեղուկ-բյուրեղյա դիսպլեով, ձեռքով և համակարգչով ծրագրավորվող, զինվորական ստանդարտ՝ MIL-STD C/D/E/F և IP-67, խմբակային և անհատական կանչի հնարավորություն,Ներքին 2-Tone, 5-Tone, CTCSS, DTCS,կոդավորման հնարավորություն, Կապուղիների քանակը՝ 128, 8 խումբ, սքանավորման հնարավորություն, Ռոլինգ սկրեմբլեր (rolling scrambler) տեղադրելու հնարավորություն, Ելքային հզորությունը՝ 5.0 Վտ, Սնուցման լարումը՝ 7.2Վ, զգայունություն (12 դԲ	լրակազմ	72000	1080000	15	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	15

			SINAD), 0.25 մկՎ, մարտկոց EBP-88N 7.2Վ, ունակությունը՝ ոչ քիչ 1650 mAh, լիցքավորման սարք EDC189/191 տակդիրով, Լիցքավորման ժամանակը՝ 3 ժամ, լրացուցիչ մարտկոց 7.2Վ, ունակությունը՝ ոչ պակաս 1650 mAh: Ջերմաստիճանի աշխատանքային տիրույթը –30C մինչ +60C Ներքին ինտեգրված անհատական սերիական համարի ESN հնարավորություն: Արտադրության տարեթիվ 2016թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:						
45	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք) CA-72	Comet Japan	Ալեհավաք ցցային 390-460 ՄՀՑ; Աշխատանքային հաճախականության տիրույթը 390-480 ՄՀց, Ուժեղացման գործակիցը 5.5 dBi, առավելագույն աշխատանքային հզորությունը 150 Վտ, Խրոցը UHF-մամա (SO-239), Դիմադրությունը 50 Օհմ: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	37800	756000	20	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	20
46	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք) CA-22 GF	Comet Japan	Ալեհավաք ցցային 130-180 ՄՀՑ : Աշխատանքային հաճախականության տիրույթը 130-180 ՄՀց, Ուժեղացման գործակիցը 5.5 dBi, առավելագույն աշխատանքային հզորությունը 150 Վտ, Խրոցը UHF-մամա (SO-239), Դիմադրությունը 50 Օհմ: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	40800	816000	20	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	20
47	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (Վերահաղորդիչ) FR6000	Icom Japan	Երկու ցցային ալեհավաքով 390-460 ՄՀց տիրույթի, 60մ ՌԿ-50 տիպի կոաքսալ մալուխով ու խրոցներով, ծրագրավորման փաթեթով վերահաղորդիչ, Հաճախության տիրույթը 400-470, 450-512, 450-520 ՄՀց Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 50Վտ կապուղիների քանակը՝ 32, քայլը՝ 2.5, 125կՀց, Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -20C+60C: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	720000	720000	1	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	1
48	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (Վերահաղորդիչ) FR5000	Icom Japan	Երկու ցցային ալեհավաքով 130-188 ՄՀց տիրույթի, 60մ ՌԿ-50 տիպի կոաքսալ մալուխով, խրոցներով, ծրագրավորման փաթեթով վերահաղորդիչ՝ Հաճախության տիրույթը՝ 136-174ՄՀց, Սնուցման լարումը՝ 13,6 Վ, ելքային հզորությունը՝ 50Վտ կապուղիների քանակը՝ 32, քայլը՝ 2.5, 125կՀց, Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -20C+60C: Արտադրության տարեթիվ 2015թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	լրակազմ	717000	2868000	4	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	4
52	ռացիաներ (Ռադիոկայան թվային) PD-685	Hytera China	Դյուրակիր ռադիոկայանի լրակազմ Հաճախականությունների տիրույթը -136 – 174 ՄՀց Հաճախականության ցանցի քայլը - 5 ԿՀց Կապուղու հաճախականության լայնությունը - 12.5/20/25 ԿՀց Ելքային հզորությունը -5Վտ, Թվային ընդունիչի	լրակազմ	300000	4500000	15	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	15

			զգայնություն - 0.22μV/BER 5%, Մարտկոց - BL1502 1500 մԱժ Li-Ion, Լիցքավորման սառք -CH10A07, Ալիքների քանակը -1024, 64 գոտի Քաշը - 310 գրամ, գաբարիտային չափսեր - /մմ/ 122x54x27, Դիսփլեյ - 160*128 պիքսել, 65536 գույն, 4.57 սմ, 4 տող, ռուսերեն լեզվով մենյու: Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանի տիրույթը- -30'C+60'C: Ստանդարտներին համապատասխանություն- IP67, MIL-STD 810 C/D/E/F/G: Թվային պրոտոկոլ/արձանագրություն - ETSI-TS102 361-1,-2,-3 , Թվային վոկոդերի տեսակը - Ambre++ SELP: Ներկառուցված 256բիթ երկարության բանալու գաղտնագրում համատեղելի Hytera basic/advanced Encryption ստանդարտի հետ, Անալոգային և թվային կապուղիներով միաժամանակ աշխատելու հնարավորություն, MIX MODE, Pseudo Trunk, Remote monitor, Սմարթ Դիսպաչ համակարգին միացման և գործածման հնարավորություն: DMRA direct mode -2 խոսակցական կապուղու հնարավորություն վերահաղորդչի միջոցով և առանց վերաղորդչի: Կանչերի տեսակներ - Խմբային, Անհատական, Կանչ բոլորին: Ռադիոկայանի լրակազմը՝ Դյուրակիր ռադիոկայան, ալեհավաք AN0156H01, մարտկոց BL1502, լիցքավորման և հոսանքասնուցման սարքեր CH10A07, գոտուց ամրակ, օգտագործողի ձեռնարկ անգլերեն կամ ռուսերեն լեզուներով: Ամբողջ չափաբաժնի համար ծրագրավորման փաթեթ և 1 լրակազմ մալուխ: Պարտադիր ներկայացվող փաստաթղթեր -Ծագման սերտիֆիկատ (CO), Արտադրողի կողմից հավաստիացված ձև (MAF): Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:						
59	կապարաթթվային կուտակիչներ (Մարտկոցներ Գեյլային EP-120-12V)	Ritar China	Մարտկոցի տիպը՝ կապարաթթվային (AGM), ունակություն 120Ա*ժամ, լարումը 12Վ, ծառայության ժամկետը՝ 6 տարի, արտաքին աշխատանքային պայմանների թույլատրելի ջերմաստիճանը -20C+25C: Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	114600	1146000	10	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	10
60	կապարային մարտկոցներ (Մարտկոց 12Վ 7Ա) ES12-7	EAGLE China	Լիցքավորվող մարտկոց, անխափան սնուցման սարքի համար, հերմետիկ կապարաթթվային, նոմինալ լարումը 12Վ, ունակությունը 7Ա*ժամ, լիցքավորման հոսանքի ուժը 1.2Ա: Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է ծախսվող նյութ:	հատ	4860	340200	70	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	70
61	վակուումային լամպեր (Լամպ ԳՈՒ-43Բ)	Svetlana RF	Լամպ ԳՈՒ-43Բ, գեներատորային տետրոդ,նախատեսված որպես ուժեղարար բարձր հաճախության տատանումների համար,	հատ	58800	705600	12	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580	12

			միաշերտ ազդանշանների ուժեղացում ռադիոհաղորդիչ սարքավորումներում 100 Մհց հաճախականության տիրույթում 1,6 կՎտ, մետաղյակերամիկական ձևավորմամբ, օգտակար աշխատատևողությունը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 1500 գրամ, հովացումը օդային 200մ³/ժ: Արտադրության տարեթիվ 2004թ. և բարձր: Հանդիսանում է ծախսվող նյութ:					զորամաս	
62	ձայնագրող սարքեր (Ձայնագրող սարքեր (բազմուղի ձայնային գրանցման սարք)) IdeaCentre	Lenovo China	Ձայնային հաճախականության (0.3-3.4 Կհց) տիրույթում միաժամանակ կատարել գրանցում 16 կապուղիներով և արխիվացում: Մուտքային լարումը 10մՎ-10Վ, պետք է ապահովի համաձայնեցում գծալարային կապի և ռադիոկայանների կապուղիների հետ: Աշխատանքային ռեժիմը շուրջօրյա, առնվազն 700 ժամվա ձայնագրության հնարավորություն՝ յուրաքանչյուր կապուղիում և արխիվացում: Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	1849800	1849800	1	Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս	1

Ծանոթություն.

- Բոլոր հիմնական միջոցների համար նախատեսել առնվազն մեկ տարվա երաշխիք:
- Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:
- Ապրանքը մատակարարվելու է վաճառողի կողմից ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության պահեստ՝ ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:
- 60 և 61-րդ չափաբաժինների ապրանքները չեն հանդիսանում հիմնական միջոց:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Յուտեկ» ՍՊԸ
Տնօրեն

Լ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-1/3-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								
Հ/Հ	(CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	31421100/1/10/2	կապարային մարտկոցներ (Մարտկոց 12Վ 7Ա)	729000	729000	729000	729000	729000	729000
9	32541400/3/10/2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (սնուցման բլոկ)	1398000	1398000	1398000	1398000	1398000	1398000
11	32541400/5/10/2	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (տպասալ 8SMS)	1398000	1398000	1398000	1398000	1398000	1398000
25	32551160/2/10/2	հեռախոսային սարքեր (ԱՀԿ հեռախոս)	3150000	3150000	3150000	3150000	3150000	3150000
27	32551120/2/10/4	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ 200 աբոնենտ IP)	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000
28	32551120/3/10/4	հեռախոսային կայաններ (Մինի ԱՀԿ 24 աբոնենտ)	1323000	1323000	1323000	1323000	1323000	1323000
32	32351150/1/10/4	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք)	1422000	1422000	1422000	1422000	1422000	1422000
33	32351150/2/10/4	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք ավտոմոբիլային)	2574000	2574000	2574000	2574000	2574000	2574000
37	32341330/2/10/4	ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ Հզորության ուժեղացուցիչով)	3399600	3399600	3399600	3399600	3399600	3399600
38	32231700/1/10/4	ռացիաներ (Ռադիոկայան)	2100000	2100000	2100000	2100000	2100000	2100000
39	32231700/2/10/4	ռացիաներ (Ռադիոկայան)	2100000	2100000	2100000	2100000	2100000	2100000
41	32231700/5/10/4	ռացիաներ (Ռադիոկայան)	1080000	1080000	1080000	1080000	1080000	1080000
45	32351150/3/10/2	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք)	756000	756000	756000	756000	756000	756000
46	32351150/4/10/2	ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք)	816000	816000	816000	816000	816000	816000
47	32231300/2/10/4	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (Վերահաղորդիչ)	720000	720000	720000	720000	720000	720000
48	32231300/3/10/4	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (Վերահաղորդիչ)	2868000	2868000	2868000	2868000	2868000	2868000
52	32231700/9/10/4	ռացիաներ (Ռադիոկայան թվային)	4500000	4500000	4500000	4500000	4500000	4500000
59	31431100/1/10/2	կապարաթթվային կուտակիչներ (Մարտկոցներ Գելյային EP-120-12V)	1146000	1146000	1146000	1146000	1146000	1146000
60	31421100/4/10/2	կապարային մարտկոցներ (Մարտկոց 12Վ 7Ա)	340200	340200	340200	340200	340200	340200
61	31711330/1/10/2	վակուումային լամպեր (Լամպ ԳՈՒ-43Բ)	705600	705600	705600	705600	705600	705600
62	32331500/1/10/2	ձայնագրող սարքեր (Ձայնագրող սարքեր (բազմուղի ձայնային գրանցման տեսք))	1849800	1849800	1849800	1849800	1849800	1849800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Յուտեկ» ՍՊԸ
Տնօրեն

Լ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N 3
N **ԳՀԱՊՁԲ-1/3-1** *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N **ԳՀԱՊՁԲ-1/3-1** *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն